

# ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



Չորեքշաբթի 01 Ապրիլ 2020 - Թիւ 18

Հրատարակչութիւն՝

Արեւմտեան Հայաստանի  
Հաղորդակցութեան Նախարարութիւն

Հետադարձ կապ  
[contact@western-armenia.eu](mailto:contact@western-armenia.eu)



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջին Էջ	1
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն	2
Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւն	4
Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարան)	6
Միջազգային - Կրթութիւն եւ գիտութիւն	8
Պետական փաստաթուղթեր	
Վերջին Էջ	



# ՀԱՅՐԵՆԻՔ

ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



Չորեքշաբթի 01 Ապրիլ 2020- Թիւ 18

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Տեղեկութիւններ

## Յուշարձանագէտ Սամուէլ Կարապետեանի յուղարկաւորութիւնը տեղի կ'ունենայ Մարտի 1-ին



Յարգելի հայրենակիցներ, յուշարձանագէտ Սամուէլ Կարապետեանի վերջին հրաժեշտը տեղի կ'ունենայ Մարտի 1-ին՝ ժամը 12:00-էն 14:00-ը, «Էրեբունի» սուգոյ սրահին մէջ (Խաղաղ Դոնի 2/14): Յուղարկաւորութիւնը՝ Երեւանի քաղաքային պանթէոնին մէջ (Թոխմախ): Ասոր մասին տեղեկացուցին Սամուէլ Կարապետեանի յուղարկաւորութիւնը կազմակերպող կառավարական յանձնաժողովէն:

## Մարտի 20-ին գարնանային օրահաւասարն Է եւ Հայկական Ամանոր



**Սիրելի հայեր, այս օր՝ Մարտի 20-ին գարնանային օրահաւասարն Է եւ Հայկական Ամանոր.**  
Այս տարի Հայկեան սրբազան տօմարը Գրիգորեան տօմարով Մարտի 20-ին սկիզբ կ'առնէ, հետեւաբար վաղը Արեգ ամսուայ Արեգ օրն է.  
Կանխաւ կը շնորհաւորեմ բոլոր Հայերը՝ Ամանորի կապակցութեամբ, եւ կը մաղթեմ առողջութիւն, արեւշատութիւն եւ յաջողութիւն..

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## Արեւմտեան Հայաստանի անկախութեան Հարիւրամեակին նուիրուած Գիտաժողով



Արեւմտեան Հայաստանի Անկախութեան հարիւրամեակին եւ Սեւրի դաշնագիրին վերաբերեալ առաջին խորհրդաժողովը տեղի ունեցաւ Յունուարի 24-ին ՝ Փարիզի 16-րդ զանգուածի քաղաքապետարանի դահլիճէն ներս խիստ խորհրդանշական միջավայրի մէջ:

Այս առիթով Նախագահ Արմենակ Աբրահամեանը ներկայացուց իր զեկոյցը, որ հասանելի է pdf ձևաչափով: Այնտեղ ներկայացուած են հարիւրամեակի համար նախատեսուած երկու մենագրութիւնները (pdf), ինչպէս նաեւ երկու տեսակիւթեր, որոնցմով ցուցադրուած է այդ պատմական պահը:

Նախագահ Արմենակ Աբրահամեանը պաշտօնապէս կը ներկայացնէ Նախագահ Վուդրօ Ուիլսոնի իրաւարար վճիռը՝ գիտաժողովի ժամանակ

Ձեկոյց — <http://www.western-armenia.eu/news/Actualite/2020/CENTENAIRE DU TRAITE DE SEVRES-Conference-24.01.2020.pdf>

Տեսանիւթ, մաս 1 : [https://www.youtube.com/watch?v=3TmVG\\_Gkqi4&t=3s](https://www.youtube.com/watch?v=3TmVG_Gkqi4&t=3s)

Տեսանիւթ, մաս 2 : [https://www.youtube.com/watch?v=UQVl\\_fE8ICE&feature=youtu.be](https://www.youtube.com/watch?v=UQVl_fE8ICE&feature=youtu.be)

Արեւմտեան Հայաստանի Կառավարութիւն Կրթութիւն եւ գիտութիւն

## Լոյս տեսաւ Հայկական Դպրոցներուն համար «Հայոց Պատմութիւն » դասագիրքը



Էջ 8  
Էջ 8

### Չաքար-Ահմետ Բիքիչ



Մարդը միշտ ջանք գործադրեր է հասկնալու, թէ ինչ կը կատարուի բնութեան մէջ եւ այն ինչ չէ ընկալած, փորձեր է անոնց առարկայական իմաստ տալ՝ վերածելով խորհրդանշչերու: Հասարակութիւնները գիրերու գոյութենէն շատ առաջ արտայայտուեր են նշաններու, նկարներու եւ խորհրդանշչներու միջոցով: Գերեզմանաքարերու վրայ, քարանձաւի պատերուն, երբեմն տաճարներու վրայ, երբեմն ալ մարմինի վրայ կրօքերն նկարուած նախշերն ու խորհրդանշչները միշտ ալ հանդիսացեր են հետաքրքրութեան առարկայ: Այսօր մաշկի տակ նկարուած նախշերը կը կոչուին դաջուածքներ: [Չաքար-Ահմետ Բիքիչ](#)

## ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

### Արեւմտեան Հայաստանի Նախագահ Արմենակ Աբրահամեանի այցը՝ Արդահանի շրջան



Նախագահ Արմենակ Աբրահամեանը Փետրուարի 18-ին այցելել է Արեւմտեան Հայաստանի Արդահանի շրջան:

Այցին ընթացքին Նախագահ Աբրահամեանը տեղւոյն վրայ ծանօթացել է շրջանին տիրող իրավիճակին: Հանդիպումներ ունեցել է տեղի բնակիչներու, տարբեր կազմակերպութիւններու հետ: Ծանօթացել է մարդկանց յուզող խնդիրներուն: Նախագահն իր հանդիպումներուն ընթացքին քննարկել է համագործակցութեան հնարաւոր ուղղութիւնները: Նախագահին այցը Արդահանի շրջան՝ աւարտուել է Ծովակ Հիւսիսոյ (Չլդըր) լիճ այցելութեամբ:

### Արեւմտեան Հայաստանի Նախագահ Արմենակ Աբրահամեանը այցելել է Մուշ



Նախագահ Արմենակ Աբրահամեանը այցելել է Արեւմտեան Հայաստանի Մուշի շրջան, անոր ուղեկցել են Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի պատգամաւորներ:

Այցին ընթացքին Նախագահ Աբրահամեանը այցելել է Մուշ եւ հարակից բնակավայրեր: Հանդիպումներ ունեցել է տեղի բնակիչներուն, հասարակական կազմակերպութիւններուն հետ: Այցելել է Մուշի մշակութային կեդրոն: Հանդիպումներուն ընթացքին քննարկուել են ընկերային եւ մշակութային հարցեր: Նախագահը նաեւ այցելել է Մուշի հայկական կիսաւեր եկեղեցիներէն մէկը. այդտեղ մօտ ժամանակներս կիրականացուին բարեկարգման աշխատանքներ:

## Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն

### Արեւմտեան Հայաստանի Նախագահ Արմենակ Աբրահամեանը այցելել է Սուլուխ



Արեւմտեան Հայաստանի Նախագահ Արմենակ Աբրահամեանը, Խորհրդարանի անդամներու հետ այցելել է պատմական Սուլուխ գիւղ՝ Մուշ-Խնուս ճանապարհին վրայ, Արածանի գետի ձախ ափին:

Այցին ընթացքին Նախագահին ու Խորհրդարանի պատգամաւորները շրջել են պատմական տարածքը, այցելել են հռչակաւոր Սուլուխի կամուրջը, որուն վրայ 1907 թուականի Մայիսի 28-ին իր մահկանացուն կնքեց հայ ազգային ազատագրական շարժման հերոս Գեորգ Զաուշը:

Նախագահը եւ Խորհրդարանի անդամները այցելել են շրջակայ գիւղեր, շփուել են տեղացիներուն հետ, նաեւ այցելել են հայկական կիսաւեր եկեղեցի մը:

### Արեւմտեան Հայաստանի Նախագահ Արմենակ Աբրահամեանի հանդիպումը Հայկեան միաբանութեան հետ



Սոյն թուականի Փետրուարի 23-ին Զուրմ Ղազար Սարգսեանի հրաւերով տեղի ունեցաւ Արեւմտեան Հայաստանի Նախագահ Արմենակ Աբրահամեանի հանդիպումը Հայկեան միաբանութեան հետ:

Հանդիպման սկիզբը Նախագահը համառօտ ներկայացուց իր կենսագրութիւնը, որուազներ Արցախեան ազատամարտէն, ինչպէս նաեւ՝ Արեւմտեան Հայաստանի Կառավարութեան ստեղծման պատմութիւնը, այս տարուայ ընթացքին նախատեսուող յառաջիկայ ընելիքները, այնուհետեւ պատասխանեց Հայկեան Միաբանութեան հարցերուն:

Հանդիպման մասնակիցները պայմանաւորուեցան համատեղ աշխատանքներ իրականացնել Արեւմտեան Հայաստանի ազգաբնակչութեան շրջանին՝ Հայկեան (ազգային) մշակոյթը տարածելու նպատակով, ինչը պիտի նպաստէ Հայ ազգային զարթօնքին: Հանդիպումները կը դառնան շարունակական:

## Նախագահական Հրամանագիր



Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահի հրամանագիր

№75 – 2020.03.21

**Կապուած Կորոնավարակ (Covid-19) համաճարակի հետ, որ կ'ազդէ ամբողջ աշխարհի բնակչութեան վրայ, ներառեալ Թիւրքիոյ եւ Արեւմտեան Հայաստանի աշխարհագրական տարածքին:**

**Հանրապետութեան նախագահը,**

Հաշուի առնելով Սահմանադրութեան 76-րդ յօդուածը,

Հաշուի առնելով Նախագահ Վուդրօ Ուիլսոնի իրաւարար վճիռը, որ պաշտօնապէս կը սահմանէ Թիւրքիոյ եւ Արեւմտեան Հայաստանի միջեւ սահմանը,

Հաշուի առնելով 2016 թուականի Յունիս 24-ին Արեւմտեան Հայաստանի կողմէ ՍԵԼԻ պայմանագրի վաւերացումը,

Հաշուի առնելով Արեւմտեան Հայաստանի եւ Թիւրքիոյ մէջ առկայ վիճակագրութիւնը՝ կապուած Կորոնավարակի տարածման հետ.

**Հրամանագիր**

**Յօդուած 1:** Արեւմտեան Հայաստանի եւ Թիւրքիոյ միջեւ ցամաքային, օդային եւ ծովային սահմանի ժամանակաւոր փակումը՝ երկու երկիրներուն միջեւ ոչ էական տեղաշարժերու ծաւալով,

**Յօդուած 2 :** Հայցել Միացեալ Նահանգներու Նախագահ Դոնալդ Թրամփին՝ աջակցելու Արեւմտեան Հայաստանի եւ Թիւրքիոյ միջեւ սահմանի ժամանակաւոր փակման վերաբերող գործընթացներուն, վերահսկելով սահմաններու հասանելիութիւնը՝ համաձայն Նախագահ Վուդրօ Ուիլսոնի իրաւարար վճիռին, որ պաշտօնապէս կը սահմանէ Թիւրքիոյ եւ Արեւմտեան Հայաստանի սահմանը:

**Յօդուած 3 :** Հայցել Եւրոպական իշխանութիւններուն եւ ՄԱԿ-ին՝ օգնելու Սուրիայէն ժամանած հայ փախստականները իրենց հայրենիք վերադարձնելու գործին, ովքեր կը պահանջեն ապրիլ իրենց նախնիներու երկրին՝ Արեւմտեան Հայաստանի մէջ:

**Յօդուած 4 :** Հրամանագիրը կը հրապարակուի Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան պաշտօնական տեղեկագրի էջերուն:

**Կարին, 21 Մարտ, 2020 թ.**

**Արմենակ Աբրահամեան**

**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ**



Արեւմտեան Հայաստանի Հանրապետութիւն

## Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահ՝ Մեծարգոյ պարոն Դոնալդ Թրամփին



Յարգելի պարոն Նախագահ,

Ձեզի նման՝ ամեն օր ես Նոյնպէս կը հետեւիմ համաճարակի զարգացման մեր երկրի եւ ամբողջ աշխարհի վրայ, եւ յատկապէս այն որոշումներուն՝ որոնք ընդունուած են Սպիտակ տան կողմէ ստացուած էլեկտրոնային նամակներու շնորհիւ:

Իրօք, եկած է ժամանակը, որպէսզի բոլորն ստանան անվճար թեստեր, որպէսզի համաճարակի փոփոխութեան ճշգրիտ պատկերացումն ունենան եւ կարողանան անոր դիմակայել անհատականօրէն:

Անհատականացուած այս ռազմավարութիւնը պետք է կիրառուի բոլոր երկիրներուն մէջ, ներառեալ Արեւմտեան Հայաստանի: Այնուամենայնիւ, ինչպէս կը տեսնէք վիճակագրութենէն Կորոնավարակը արագօրէն կը տարածուի Թիւրքիոյ մէջ, այդ պատճառով ալ ես նախնական հրամանագիր կը հրապարակեմ, որուն մէջ նշուած է Արեւմտեան Հայաստանի ցամաքային, ծովային եւ օդային սահմանը Թիւրքիոյ հետ ժամանակաւորապէս փակելու մասին: Այդ կ'օգնէ զսպելու համաճարակի տարածումն ու փրկելու մեր ժողովուրդին կեանքը:

Ինչպէս գիտէք, Արեւմտեան Հայաստանի եւ Թիւրքիոյ միջեւ իրաւարար վճիռով այս սահմանը հաստատուած է ստորագրուած է 1920 թուականի Նոյեմբեր 22-ին, Միացեալ Նահանգներու 28-րդ նախագահ Վուդրօ Ուիլսոնին կողմէ:

Նաեւ իրաւարար վճիռի շրջանակներուն մէջ՝ կը խնդրեմ ձեր աջակցութիւնը Արեւմտեան Հայաստանին՝ բոլոր հնարաւոր եղանակներով երկու երկիրներուն միջեւ աննշան տեղաշարժերուն առումով ամբողջ սահմանի ժամանակաւոր փակումով, սահմանի ընդլայնուած մուտքի հաստատումով եւ վերահսկումով:

Գիտակցելով այս խնդրանքի մեծութիւնը, բայց կանգնած ըլլալով ամբողջ բնակչութեան կեանքը փրկելու պատասխանատուութեան դիմաց՝ ես կը խնդրեմ ձեզի, յարգելի Նախագահ, հաշուի առնել կենսական եւ, հետևաբար, մեծ նշանակութիւն ունեցող այս խնդրանքը:

Յարգանքներով,

**Արմենակ Աբրահամեան**

**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ**

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողով (Խորհրդարան)

## Լեւնարդո Պասմաճեանն ընտրուեցաւ Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի Ժամանակաւոր Նախագահ



Շաբաթ օր, 11 Մարտ 2020-ին, լիիրաւ նստաշրջանի ընթացքին, հեռակայ խորհրդաժողովին, Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ներկայ պատգամաւորները կազմակերպեցին Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի Ժամանակաւոր Նախագահի ընտրութիւնը:

Այս ընտրութիւններուն առաջարկուեցան երեք թեկնածուներ՝ Սեդա Մելիքեանը, Ռուզաննա Խաչատրեանն ու Լեւնարդո Պասմաճեանը:

Ձայներու մեծամասնութիւնը կողմ քուէարկեց Լեւնարդո Պասմաճեանին, որն 2020 թուականի Յունուար 19-էն ի վեր Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի պատգամաւոր է: Ան մասնագիտութեամբ ճարտարապետ է, ծնած է Արժանտինի Բուէնոս Այրես քաղաքին մէջ, ուր յաճախել է հայկական դպրոցներ եւ ակումբներ: Ան 20 տարիէ ի վեր կ'ապրի Ֆրանսայ, ուր ներգրաւուել է Ռոն-Ալպ շրջանի տարբեր հասարակական կառոյցներէ ներս: Ան կը հանդիսանայ Լիոնի մէջ բարձրացող՝ բոլոր ցեղասպանութիւններուն եւ մարդկութեան դէմ յանցագործութիւններուն նուիրուած: «Մեմորիալ»-Յուշահամալիրի հեղինակն ու իրացնողը:

Խորհրդարանի Նախկին Նախագահ Աղուան Տօնականեանի հրաժարականէն ետք՝ Լեւնարդո Պասմաճեանի գլխաւոր խնդիրը պիտի ըլլայ կազմակերպել Արեւմտեան Հայաստանի Խորհրդարանի յաջորդ նստաշրջանը (Ազգային Ժողովի երկրորդ լիազօրութեան երրորդ նստաշրջանը), ի հարկէ Կովիդ-19 համաճարակի վերջնական յաղթահարումէն ետք, եւ զբաղուելու ընթացիկ գործերով:

Այս նստաշրջանը տեղի ունեցաւ յատկապէս հաստատելու համար Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահի ընտրութիւնը, լիազօրելով զայն մինչեւ 2024 թ.-ի Յունուար ամիսը:

Արեւմտեան Հայաստանի հեռուստաընկերութիւնն իր անձնակազմով՝ իր շնորհաւորանքները կը յղէ Խորհրդարանի նոր Նախագահ Լեւնարդո Պասմաճեանին:

Միջազգային

### Հոլոքոստի զոհերու յիշատակի միջազգային օր — 2020



Հոլոքոստի յիշատակի միջազգային օրը ամեն տարի տեղի կ'ունենայ Յունուարի 27-ին՝ ի յիշատակ Աուշուից-Բիրկենաու համակեդրոնացման ճամբարի ազատագրման: Այս առիթով ամբողջ աշխարհով մեջ կը կազմակերպուին յիշատակի արարողութիւններ եւ ցոյցեր:



### Հոլոքոստի յուշահամալիր

Ճամբարները «յայտնագործելուն» յաջորդող 75 տարիներուն ընթացքին՝ Հոլոքոստի յուշահամալիրը կեդրոնական տեղ կը գրաւէ Հոլոքոստը վերապրածներուն համար, ներկայացնելով տարբեր վկայութիւններ:

Կը կազմակերպուին նաեւ բազում հանդիպումներ, միջոցառումներ եւ յարգանքի տուրքեր: Յունուարի 26-ին Այվրի սիւղ ՍԷՆի մէջ տեղի ունեցած հերթական արարողութեան ժամանակ՝ ներկայ գտնուել է նաեւ Արեւմտեան Հայաստանի ԱԺ պատգամաւոր պարոն Բասսամ ԹԱՀՅԱՆԸ:

Արեւմտեան Հայաստանի Կառավարութիւն Կրթութիւն եւ գիտութիւն

### Լոյս տեսաւ Հայկական Դպրոցներուն համար «Հայոց Պատմութիւն» դասագիրքը



Արեւմտահայերէնով լոյս տեսաւ Հայկական Դպրոցներուն համար գրուած «Հայոց Պատմութիւն» դասագիրքը: Չայն գրեր եւ պատրաստեր է Արտակ Մովսիսեանը: Գիրքը հաստատուած է Արեւմտեան Հայաստանի Ազգային կրթութեան նախարարութեան կողմէ:

[http://www.western-armenia.eu/news/Actualite/2020/Hayots\\_Badmutyun\\_armoc\\_01.04.2020.pdf](http://www.western-armenia.eu/news/Actualite/2020/Hayots_Badmutyun_armoc_01.04.2020.pdf)

### Մշակոյթ



Հելենո



**Չորեքշաբթի 01 Ապրիլ 2020 - Թիւ 18**

Հրատարակչութիւն՝

Արեւմտեան Հայաստանի  
Հաղորդակցութեան Նախարարութիւն

Հետադարձ կապ  
[contact@western-armenia.eu](mailto:contact@western-armenia.eu)

**Օժանդակեցէք Արեւմտեան Հայաստանը**

**WESTERN ARMENIA FOUNDATION**

CNA

RIB : 30004 00066 00010033378 67

IBAN : FR76 3000 4000 6600 0100 3337 867 - BIC : BNPAFRPPMAS